Հայոց պատմության բանավոր քննությունը 9-րդ դասարանում

Քննությունը հիմնվում է տարվա ընթացքում սովորողի կատարած աշխատանքի և ձեռք բերած կարողությունների վրա: Հարցատոմսը երկու հարց ունի.

- Սովորողը անձնական բլոգում ցույց է տալիս տարվա ընթացքում իր կատարած աշխատանքը (վերլուծություն, հետազոտություն, կարծիք), ընտրում է դրանցից իր կարծիքով ամենահաջողվածը և ներկայացնում այդ աշխատանքը՝ ինչպես կատարեց, ինչ տվեց իրեն, իր վերաբերմունքը աշխատանքին՝ այն ժամանակ և հիմա, պատասխանում է հարցերի:
- Նոր առաջադրանք, որի կատարումը կպահանջի մոտ 10 րոպե:

Սովորողը գալիս է քննության սեփական համակարգչով, որը օգտագործում է պատրաստվելիս և ներկայացնելիս: Քննասենյակում կա պրոյեկտոր: Սովորողները ստանում են հարցերը և պատրաստվում: Սովորողը պատրաստվելու ժամանակ ունի 20-30 րոպե: Պատրաստ լինելու դեպքում կարող է ավելի շուտ պատասխանել:

Գնահատականը նշանակում է դասավանդող ուսուցիչը: